

ԳԼՈՒԽ ԻՇ ԱԶՆԻՒ ԿԻՆ

Նոյն օրը դեռ արեւը չէլած մութն ու լուսուն, Որմեայ լճին արեւմտեան եզերքին վրայ՝ կիսաւեր գիւղի մը քով երկու մշակի զգեստներով մարդիկ անշարժ կեցեր ծովուն կը նայէին. այդ մարդկանց մէկը գրեթէ վաթսնամեայ ալեւոր մ'եր, որու կերպէն եւ ձեւէն կ'երեւար թէ կորովը բոլորովին չէր կորուսեր, եւ իւր լայն ճակտին վրայ յայտնի ծանր մտատանջութիւն մը զինք կը տազնապէր: Իսկ միւսը քառասունն անցած կորովի սովորական մարդ մը կ'երեւար եւ պատկառմանոք կը սպասեր ծերուն ամջել, որ անթարթափ դիմացի եզրը կարծես թէ կը չափեր մտքով: Վերջապէս ծերը դարձաւ իւր ընկերոջ եւ կամաց ձայնով ըսաւ.

– Դու հիմա ապահո՞վ ես, Վահրիճ, որ նաւավարք մութին հետ այստեղ պիտի գտնուին:

– Այո՛, Տէր:

– Ամէնքն էլ Վասպուրականի հաւատարիմ նաւավարք ե՞ն:

– Այո՛, Տէր:

– Նաւը լաւ՞ է եւ սրընթաց՝ ինչպէս ես քեզ հրամայել էի:

– Այո ծովուն վրայ անկից լաւը չի գտնուիր:

– Ինչչա՞փ ժամանակի մէջ ասկից դիմացի ափը կրնայ հասնիլ՝ լաւ թիավարելով:

– Երեք ժամ, առագաստի օգնութեամբ՝ աւելի շուտով: Վայրկեան մը լուռ կ'ենալեն վերջ ծերը հարցուց.

– Մեր զինուորները ո՞ր էն: